ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 18 » « փետրվարի » 2019թ.**
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Այդինյան
Հանձնաժողովի անդամներ՝
Հ.Հովհաննիսյան
Է.Մերյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Զոհրաբյան

1. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Մ.Այդինյան)

1.1. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019 թվականի փետրվարի 18-ին, ժամը 10:00-ին, բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3 շ., 5-րդ հարկ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի փետրվարի 12-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետով սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Պատրոն ՌՄ» ՍՊ, «Նորմա-պլյուս» ՍՊ, «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

3. «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Այդինյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ իր կողմից հաստատված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ սահմանված ժամկետում համակարգի միջոցով ներկայացվել է:
3.1.1 «Պատրոն ՌՄ» ՍՊ, «Նորմա-պլյուս» ՍՊ, «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊ ընկերությունների ներկայացված տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Մ.Այդինյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները չափաբաժիններ 1, 2, 3, 4, 5, 8, 9, 10, 11-ով, հաղթող ճանաչել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 6, 12, 13-ով՝ «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին, չափաբաժին 7-ով «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ-ին:
4.2. Պայմանագրի կնքման նպատակով «ԲՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/04» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներն՝ ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:
4.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
4.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 01.03.2019թ:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ.Այդինյան
Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ.Հովհաննիսյան
_____ Է.Մերյան
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Զոհրաբյան